

# ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍԸ

## Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Ն Մ Է Ջ



Հետաքրքրական կը համարենք ազգայնոց և այսուհետեւ մի առ մի պիտի ներկայացնենք այն յօդուածները որ կ'երեւին երոպական մամուլի մէջ հայ գեղարուեստի մասին:

Gazette de Lausanne et Journal suisse (N°. 137, 12 Juin 1907) կը գրէ հետեւեալը. « Հայ բանաստեղծութիւնն և երաժշտութիւնը » վերնագրով.

« Ոչ երբեք չափազանցուցիւն ըրած կ'ըլլամ, ըսելով որ ձեր հայրենիքը բազմաթիւ բարեկամներ կը համրէ հոս, կ'ըսէր Լօւսի Պ. Վարիչը ուրբաթ երեկոյ, Պ. Զօպանեանի և կոմիտաս Վ.ի՝ անոնց դէպ ի Համալսարանի դահլիճը առաջնորդելով: Մենք երբեք չենք մոռնար ձեր Գրիգոր Լուսաւորչի հոյակապ գործը, չենք մոռնար ձեր պատմութեան ողբերգական էջերը, և զարհուրելի դառնութեանց ատեն զորս դուք կրեցիք, մեր երկրէն խորին և կենդանի համակրութեան հոսանքներ մեկնեցան դէպ ի ձեր հայրենիք »:

Բազմաթիւ էին հանդիսականները: Արմենիա ընկերութեան ուսանողները, մանրչակագոյն թաւշեայ գլխարկներն ի ձեռին՝ աշխարհիս ամենէն շնորհալի կերպերով իրենց երեկոյթի պատիւները կ'ընէին առաջնորդելով ամէն մի հանդիսականն Ռիւմինի շէնքի մուտքէն Դասլիճի մուտքը: Այսպէս սրահին մէջ կազմուեցան զուարթ ընկերութեան մ'ոգին՝ որ իշխելէ չզաղրեցաւ: Բայց այս կերպ համակրական հետաքրքրութիւնը կամ հետաքրքրական համակրութիւնը որով հասարակութիւնը ոգեւորուած էր՝ չուշացաւ անանկու գեղարուեստական համակրութեամբ և նոյն իսկ զմայլմունքով մը որ ի վերջոյ խանդավառութեան փոխուեցաւ:

Պ. Զօպանեան առաջադրած էր ցուցնել

թէ իր հայրենիքը, զոր այնքան մեծամեծ աղէտներ արժանի կ'ընէին համակրութեան՝ քաղաքակրթութեան տարր մ'ալ էր: Հասաւ և նոյն իսկ անցաւ ալ իր նպատակէն: Գծուարութիւն չզգաց յիբաի ցուցընելու թէ Հայերը կը մշակէին իրենց պարտէզը: Բայց անոնցմէ ոմանք որ այդ բանը արդէն ըսած են, այս օր ալ պիտի գային կրկնելու թէ այս պարտէզը Գրախոսն ինքնին է, որուն վրայ ես ոչ մէկ պատճառ ունիմ տարակուսելու: Երաժշտութեան տեսակէտով, յամենայն դէպս, ուրբաթ երեկոյեան երեկոյթը յայտնութիւն մը և կախարդանք մ'եղաւ: Հայ երաժշտութիւնը լոկ երաժշտութեան տարր մը չէ, նա գեղեցիկ է՝ բեղմաւոր Գերմանիոյ և հպարտ Ֆրանսայի երաժշտութեան վերայ ստուեր ձգելու չափ, նա կրնայ մեզ տեսակ մը զաղափարական և առաջնորդ դառնալ:

« Հայ բանաստեղծութիւնը և երաժշտութիւնը, կ'ըսէ Պ. Արշակ Զօպանեան, ծնած են հին Արեւելքի լոյսով արբեցած երկնքին տակ: Անոնք ամէնքն ալ թախարուած են հեշտալի երգչանքներով, երկար և քաղցր մեղամաղձութեամբք, անոյշ նուազումներով՝ զորս կը ներշնչեն այն տեղի զմայլելի լուսընկաները, հրաշալի արշալոյսները, և մեծդի մայրամուտները և աստղերով այրող անհուն գիշերները: Վերջապէս երաժշտութիւնը օտարերկրեայ (exotique) է մասնաւորապէս իր հաստատուն և զրեթէ բացարձակ փափաքով՝ ծայրագոյն անուշութեան հասնելու »:

Բայց մի և նոյն ժամանակ, հայ ա-

րուեստին մէջ համեմատարար աւելի չափաւորութիւն և յատկութիւն կայ քան արեւելեան ժողովրդոց շատերուն քով : Անհատական կորովի վրայ հիմնուած հաւատքը, յոյսը, ճակատագրականութեան արհամարհանքը, զոր նա կ'արտայայտէ անդադար, յայտնապէս կը զանազանն գանիկայ միւս Արեւելցիներու արուեստէն : Ինչ որ ուրեմն թոյլ կու տայ մեզ հասկնալ և սիրել հայ արուեստը՝ է անոր կրկին քնադրոջմը, թէ՛ արեւելեան և թէ՛ արեւմտեան : Հայ բանաստեղծութիւնը կազմուած է միանգամայն ժողովրդական բանաստեղծութենէ, աշուղներու բանաստեղծութենէ և դասական բանաստեղծութենէ : Ոչինչ կամ զրեթէ ոչինչ կը մնայ հեթանոսական դարերու գործերէն : Բայց ԺՊ դարէն ի վեր քերթուածները կը բազմանան : Ժողովրդական բանաստեղծութիւնը ընդհանրապէս յանկարծարանութիւնը են անձերու՝ պատկանող նոյն իսկ այն ժողովրդեան, որուն կեանքը կը պատկերացնեն : Կարդացէք սա Ակնեցի մօր մը օրօրը :

Կ'երգեմ քեզ օրօր, որ զու լսելով  
 Պսակիս ցնանա անուշիկ քով .  
 Քնացիր, պալաս, և մեծցիր .  
 Մեծցիր և եղբ մեծ մարդ մը .  
 Տարածով և ամբողջ զիդ մ'եղիր .  
 Եղբ մեծ անասա մը .  
 Մի՛ն՝ արմատներդ հողին մէջ  
 Եւ թող սփռն ծառերդ ինչ տեղ իրենց ճիւղերուն ստուերը :

Աշուղներու բանաստեղծութիւնը նման է ժողովրդական բանաստեղծութեան, պատկերներու մեծազոյն ճոխութեամբ և ներբութեամբ : Քալով դասական բանաստեղծութեան, նա ունի իրը հեղինակ, կրօնաւորներ և զիտնականներ, բայց ժողովրդեան զգացումը մեծ յաջողութեամբ կը ցուլայ հոն : Այս բանաստեղծութեանց մեծամասնութիւնը յայտնի չընդադառն պարզութեամբ մը յօրինուած են, որ մեր մէջ միայն Մ. Ֆ. Թամիւզիները կրնան մեզ անոր գաղափար մը տալ : Բայց ամէն բանէ աւելի անոնք քնութենէ թափանցուած են, որ անոնց ծնունդը տեսած

է : Բնութեան զգացումը կայ թէ բանաստեղծութեան մէջ և թէ հրաժշտութեան որ յաճախ կ'ընկերէ անոնց : Որովհետեւ ժողովրդական բանաստեղծութիւնը՝ ինչպէս նաեւ աշուղներուն գրեթէ ամէնն ալ երգուած են : Կոմիտաս Վ. որ ըմբայած է Հայաստանի իր եկեղեցական ճշմարիտ հրաժշտութիւնը, ձայնագրած է նաեւ բազմաթիւ ժողովրդական երգեր և ճիշդ այս պատճառաւ եկած է իր ձայնով և արուեստի գործակցութեամբ օժանդակել Պ. Չօպանեանի :

Պ. Չօպանեանի բանաստեղծութիւնը աւարտեցաւ ուրեմն քանի մը հրաժշտական և բանաստեղծական գործերու ունկնդրութեամբ : Այն ատեն միայն կրցայ հասուրլլալ հայ արուեստի իրական բարձրութեան : Այս տեսակ գործերու ըլլայ գրական, ըլլայ հրաժշտական, ընթերցումը չէ կարող պէտք եղած գաղափարը տալ : Պէտք է լսել զանոնք կոմիտաս Վ. ի պէս արուեստագէտ անձի մը բերնէն, որ զանոնք կ'երգէ հայերէն, ընկերակցութեամբ դաշնամուրի, թէ՛ մեր ներդաշնակման վարժութիւնը գոհացնելու համար և թէ՛ յիշեցնելու համար Հայաստանի մէջ անոնց ընկերող գործիքներու ձայնը : Ինչպիսի՛ դաս մ'է մեր հրաժշտներուն համար, գործը այս արուեստագէտին՝ զօր կրնանք անանոն կոչել որովհետեւ աւելի իր երկրին արուեստին համար աշխատած է քան թէ իրենին՝ և քանի որ ամբողջ ցեղ մը ինքզինք կը բացատրէ իր ձայնով :

Բայց մանաւանդ ինչպիսի՛ դաս գեղեցկութեան : Իր նուազած երգերը չեն կառավարուիր այն գեղեցկագիտութեամբ զոր կրնանք արտաքին կոչել, այսինքն ներքոնչումէն տարբերող կանոններով, ինչպէս են օրէնք ներդաշնակման կամ օրէնք չափակցութեան . — զգացման միութիւնն է իրենց միութիւնը, և ինչպիսի՛ ազատութիւն չափերուն : Ինչպիսի՛ անսխալութիւն՝ ձայնի՛ բարձրութեան և լայնութեան աստիճանը պահելու (tonalité et carrure), ժողովրդական երգերը ամէնն ալ լի են այն աճող կամ նուազող անջրպետներով զորս

արեւմուտքի արուեստագէտները « չերգը-  
ցուելիք » կ'անուանեն՝ երբ Տեղիստի կը  
գործածէ զանոնք : Բայց անցեալ երեկոյ  
ոչ ոք հասարակութիւնը կը զգուշացնէր  
ինքն իրմէ. բնաւ չէր սպասեր հայկական  
այս երաժշտութենէն, ինչ որ կը յամարի  
պահանջել եւրոպական երաժշտութենէն .  
Թոյլ տուաւ ինքզինք անոր տպաւորութեան  
տակ և առաջին վարձատրութիւնը ինքը  
գտաւ :

Ուրախութիւնը որով այս մեղեդիներու  
քմահաճոյ թելին կը հետեւէր, ինքնաբե-  
րական խանդավառութիւնը որով կը ծա-  
փահարէր զանոնք՝ հաճելի տեսարան մը  
կը յօրինէր : Պէտք է ըսել թէ անոնցմէ  
իւրաքանչիւրը ունէր իր յատուկ գեղեց-  
կութիւնը, որուն վրայ դժբաղդարար ծա-  
մանակս չի ներբեր երկար խօսելու : Այս  
ալ նմանապէս հայ արուեստի բնորոշ նկա-  
րագիրներէն մին է որ իր զանազանու-  
թիւնը կը հաւասարի իր գեղեցկութեան :

Ահա թէ ինչպիսի երգերով Հայերը ի-  
րանց կեանքը և լեռները կը լեցնեն : Ահա  
թէ ինչն էր յօրինած են կուսութենէն ուր  
գրած է զիրենք Աստուած :

Իսկ մենք ... Ի՞նչ ըրած ենք մերինէն » :  
(Է. Ս.)

Journal de Genève, (12 Juin N<sup>o</sup>.  
159) կը գրէ հետեւեալը .

« Չափազանց ուշ չէ ի Ժընէվ եղած ե-  
րեկոյթին վրայ խօսելու, որ կազմակեր-  
պուած էր հայ ուսանողական ընկերու-  
թենէն, յօգուտ Հայաստանի մէջ սովի զոհ  
զացոյցներուն :

Խմբերգը տեղի ունեցաւ Քոնսէրվա-  
թուառի մէջ, նախազահութեամբ Մ. Լէո-  
րոյտ Պրավրի, որուն անձնանուիրութիւնը  
և հոգը ի վաղուց նուիրուած են հայկա-  
կան խնդիրներուն, և կառավարութեամբ  
Կոմիտաս Վ.ի, որ զլիսաւոր երաժիշտն  
է Էջմիածնայ մայր եկեղեցւոյն :

Հետաքրքրական անձ մ'է Կոմիտաս  
Վ. զիտուն երաժիշտ մը՝ որ իրեն  
ճամբորդութեանց ատեն հաւաքած է ժո-

ղովորական և եկեղեցական երգերը, դուրս  
ձգելով անոնցմէ ինչ որ օտար ծագում  
ունի, և այսպէս վաւերական ազգային  
երաժշտութեան ստաղծը կազմելով — « Ե-  
կեղեցական երգեր և ժողովրդական երգեր »,   
միշտ հին եղանակները պահելով :

Տէր Կոմիտաս ներդաշնակած է մեծ ա-  
րուեստով ժողովրդական և եկեղեցական  
երգերը որոնցմէ ոմանք Ժ դարէն եկած  
են : Նիստը սկսաւ Պ. Արշակ Չօպանեանի  
գլուցատրութեամբ մը, ուր նա յաջող  
կերպով ճառելով հայկական երաժշտու-  
թեան և քանաստեղծութեան վրայ, ցոյց  
տուաւ առաջինն մէջ եղանակներու քաղ-  
ցրութեան և անուշութեան բնաղբոյժը, դի-  
տել տալով որ հայկական արուեստը ազատ  
է արեւելեան այլ ժողովուրդներու սիրած  
ճակատագրականութենէն և թէ ազնուա-  
կան ու խրոխտ նկարագիր մ'ունին իրեն  
ներշնչումները, ուր գրեթէ միշտ յոյսի  
նօթ մը կայ :

Կոմիտաս Վ. այս հանդէսին համար  
խառն խմբերգ մը ձեւացուցած էր յիտուն  
հոգիներէ բաղկացեալ, ուր չէին պակսիր  
գեղեցիկ ձայներ, մասնաւորապէս Թաւերը  
(basses), և որ սքանչելի կերպով նու-  
ագեց :

Գեղեցիկ ձայնով օժտուած վերնաբամբ  
մը (ténor) Պ. Ա. Շահ-Մուրատեան և Մ.  
Կ. Բարմ (baryton), մեր քաղաքին ամենէն  
քաջ երգիչներէն, Տիկին Թաղէսուսանի և  
Տիկին Քուսիսիսեանի օգնութեամբ երգե-  
ցին մեներգները շատ հրաշալի կերպով :

Նախ լսեցինք շարք մը եկեղեցական  
երգեր, որ եթէ ի սկզբան — ըսելու տեղն  
է, — հասարակութեան միտքը շփոթ-  
ցուցին իրենց արեւելեան կերպերովը, ո-  
րոնց նա չէ վարժուած, քայց նա շուտով  
ճանչցաւ գեղեցկութիւնները և արտայայ-  
տութեան ոյժը որ կայ այդ պատկառելի  
օրհներգներուն մէջ :

Երգուեցաւ ի միջի այլոց « Կայր աս  
խայիկ » մը Գ. Նարեկացւոյն ընծայուած  
(Ժ դար) . լի է կոյսին ողբերով, այն-  
պիսի զգայուն իրապաշտութեամբ և սրը-  
տառու չ ցաւով սողորուած որ զամէնքը

մեծ յուզման մէջ ձգեց. այս էջը՝ հիանալիք մը կրօնական զգացման՝ արտասանուեցաւ Կոմիտաս վ.էն որ ստիպուեցաւ զայն նորէն սկսիլ:

Շատ հետաքրքրական բաներ կան — ի վերջոյ նաեւ քիչ մը միակերպութիւն կըրկնութեանց պատճառաւ — այդ նկարչական ժողովրդական երգերուն մէջ, հաւաքուած Օշականի, Բարբի, Իգարիի մէջ, և այլն. Անճրեք կը բափէ իւր փայփոյն ջրերը. Այս գիշեր յոյս տեսայ, և այլն:

Թիշատակելի են Շիրակ գաւառի մէկ հովուերգը Հապերպակ, Թարմութեամբ լի էջ մը՝ շատ լաւ երգուած Տիկին թաղէտեսան է Պ. Բ. Շան-Մուրատեանէն, Առակը, և Հով արեք, սարեր ղան, զոր Պ. Կ. մեկնեց կատարեալ արհեստով մը:

Պիտի չմոռնանք յիշել Հայրական երեք պարթի եղանակներու նուագածութիւնը զոր ըրաւ Տիկին Երիձեան Շարդի, որ զգացունել տուաւ իր սովորական աշխոյժով առնոց հետաքրքրական չափակցութիւնները և առանձին համը »:

Domenico Ciampoli — Հոռմայ արքունական մատենադարանի գրապետ՝ իտալերէն գեղեցիկ Թարգմանութիւն մը կ'ընծայէ Զօպանեանի « Հիւանդանոց » քերթուածին (հրատարակուած La vita letteraria Թեթիս մէջ 22 Marzo 1907), Իսկ Momento լրագրերը (Թիւ 44, 13 փետր. 1907) հետեւեալը կը գրէ հայ բանաստեղծութեան մասին.

« Կան ժողովուրդներ՝ որ կարեւոր դեր մ'ունեցած են քաղաքակրթութեան պատմութեան մէջ. կ'ապրին ժպտուն և բեղաւոր հայրենիքի մը ժոց՝ որ կը նպաստէ իսկապէս և յարստուն զարգացման. առատօրէն կ'արտադրեն ազնուական հանճարներ և խրոխտ ոյժեր՝ կարող ազատ կարգեր ձեռք բերելու. և սակայն, հին մեծութենէն ինկած, հակառակ դիւցազնական ճիգերու — որով կը ջանան վերականգնիլ — վիճակուած կը թուին բազդէն ցաւերու:

Այս ժողովուրդներէն մէկն ալ է Հայը, որ Եւրոպայի կարապետը եղաւ ճարտարարուեստներու և երկրագործութեան մէջ. նա հռչակաւոր եղաւ իր պատերազմներով, ինքզինքը բացատրեց ճարտարապետական յանդուգն և երեւակայտո արուեստով մը, կը պարծի մատենագրութեամբ մը՝ որ միշտ տենչ մը ունեցած է դէպ ի արեւմուտքի կրթութիւնը՝ մտածումի ազատ ձեւեր փնտռելուն մէջ, մինչդեռ միւս կողմէն կը պատերազմէր թշնամիներուն դէմ Եւրոպական քաղաքակրթութեան՝ որուն առջեւն եղաւ Ասիոյ մէջ: Յաւազին պայմաններու տակ ապրելով՝ ջանաց միշտ ազգային զգացման սուրբ կրակն ունենալ:

Ժողովուրդին մէջ այս կրակը պահել գործն եղաւ և է ժողովրդական բանաստեղծներու, յաճուն հագներգուններու, աշուղներու՝ որոնք տեղէ տեղ կ'երթան սուրբ, սիրային և հայրենասիրական երգեր երգելով: Trouvèreներու բանաստեղծութիւնը չէ սա որ կ'ուրախացնէր միշտ նաղարեան դղեակները և հասարակաց տունները և որ գլխաւորապէս դիւցազներգական նիւթերէ իր ներշնչման ոյժը կ'առնէր: Բանաստեղծութիւն մ'է՛ որ կ'երգէ սէրը, բնութեան գեղեցկութեանց պաշտամունքը, կը խարազանէ ապականեալ բարքերը. բարոյական խորհուրդներ կու տայ, կը հեղու կրօնական զգացման լիութիւնը: Նոր փայլ մը կու տայ ուխտագնացութեանց, մեռելական հսկումներու, հարսանիքներու, զիւղի ախիւ կամ զիւղապետին քով տեղի ունեցած զիշերային հաւաքումներու. ժողովրդական կեանքին կը խառնուի և խորապէս կը թափանցէ անոր մէջ: Այս յածերգուններէն ոմանք, աշուղները, որոնք ծննդեամբ հայ են, միայն կրօնական տաղեր կ'երգեն և ժողովուրդը որ մեծ յարգանք ունի անոնց՝ սուրբ անձինք կը համարի զանոնք: Կ'երգեն ոմանք սազի ընկերակցութեամբ, տեսակ մը նախնական ջութակ, որուն զործածութեան մէջ տարօրինակ յաշոգութիւն ունին:

Թափառիկ կեանքին նուիրուած և ընդ-

\*  
\*\*

հանրապէս ամուրի են . բայց իրենցմէ մէկուն՝ Ճիւանիի տաղերէն աւելի լաւ կը հասկցուի հայ յածերգութիւն նկարագրերը :

« Առշուղ պզտիկ թռչուն մըն է առանց թւի, այսօր հոս, վաղը հոն . անիւ մըն է որ կը զառնայ, այսօր հոս վաղը հոն ... Ճիւանի ոչ մէկ տեղ կանց չ'առնէր, կը թռչտի մեղուի մը նման , ցմահ այսպէս պիտի ապրի . այսօր հոս, վաղը հոն » :

Այս յանկարծարաններուն գործերուն մեծ մասը կորսուած է . միայն կը մնան գործերը այն զրագէտ երգիչներուն՝ որոնք երգը կը զրին կամ արտասանած ըլլալէ առաջ, կամ վերջը :

Հայկական բանաստեղծութիւնները երկու տեսակի կը բաժնուին . անոնք որ շաւրագրուած են արուեստով աշուղ երդողներէ՝ և անոնք որ գրուած են գիտուն բանաստեղծներէ, արժանիքի տէր գրողներէ, յաճախ եկեղեցականներէ՝ աշուղներու լեզուով և ճաշակով : Այս վերջինները առնեն բազմաթիւներն են, որովհետեւ ժի՛ղ զարէն առաջ եղածները չհասաւորեցան և չգրուեցան և անոնցմէ միայն սերունդ է սերունդ աւանդուած քանի մը կտորներ հասան մեզ : Գործածուած լեզուն ընդհանրապէս ռամիկ հայերէնն է, որ ժողովուրդէն կընար հասկցուիլ, այն ռամիկ հայերէնը՝ որ արդի հայ զրականութեան լեզուն զարձաւ : Դասական բարբառը եկեղեցական և պատմական գործերու վերապահուած էր :

Հայկական բանաստեղծութիւնը, ինչպէս կը դիտէ Առշուղ Զօպանեան, քանի մը նմանութիւններ ունի պարսկականին հետ, սակայն մակերեւութապէս միայն : Հայ աշուղներէն զրեթէ ամէնքը ճանչցած են տաճկական բանաստեղծութիւնը և անկից ձեւեր, պատկերներ և տաղաչափութիւն փոխ առած, սակայն ինքնատիպ մնալով իրենց յղացումներուն իսկութեանը մէջ : Երբեմն տաճկերէն և պարսկերէն զրեցին, բայց օսմանեան ցնարբագութեան մէջ մտոցցին ազգային զգացումը և ջրիստոնեայ հոգին, և գեղարուեստական տեսակէտով, աւելի տուին անոնց՝ քան առին :

Առշուղ Զօպանեան, հայ զրագէտ և բանաստեղծ՝ ստանձներ էր իր ազգայիններու բանաստեղծութիւնը արեւմուտքին մատչելի ընելու ազնիւ պաշտօնը :

Հրատարակեց 1903ին թարգմանութեան հատոր մը վերնագրեալ « Chants populaires arméniens » Փօլ Ատանի յառաջարկով մը (Քարիզ, Օլլէհտորֆ) . « Poèmes arméniens anciens et modernes » Գաբրիէլ Մուրէլի նախարարով մը և հիմա « Les Trouvères arméniens » (Մէրցիւր տը Ֆրանս, 1907) :

Եթէ կրօնական զգացումը կը տիրէ հայկական բանաստեղծութեան մէջ, դուրս չի թողուր սիրային զգացումը . մանաւանդ երբեմն երկուքն ալ կը հալին մի և նոյն ցնարբագութեան մէջ՝ որուն վերջը զղջում մըն է և մտքին քարձրացումը առ Աստուած երկրային աէրերուն մէջ չափազանց հաճութիւն դրած ըլլալուն համար :

Այս հաւաքածոյնի մէջ եկեղեցական բանաստեղծութիւնը նշանաւոր ներկայացուցիչներ ունի : Յովհաննէս Պլուզը (1250-1326) հեղինակ բազմաթիւ սքրազան երգերու որ մաս կը կազմեն Շարականի այսինքն է Հայ եկեղեցոյ երգարանին : Գրեգոր Աղթամարցիւն որմէն, ի մէջ այլոց, կայ աղօթք մը առ Ս . Կոյսն Մարիամ որուն վրայ զրած է նաեւ Ղունկիանոս, ժի՛ղ զարուն վերջը ապրած :

Կոստանդին Երզնկացի՝ որ ժի՛ղ զարուն կիտուն կը պատկանի, կը ցրուցնէ այն լոյսը՝ որ աստուածային տեսիլքով մը ճառագայթած՝ լուսաւորած է իր հոգին և զօրացուցած իր մէջ բանաստեղծութեան ձիրքը :

Սայաթ-Նովայի, Յովհաննէս Թլկուբանցիի, Երեմիա Քէօմիւրճեանի, և նոյն ինքն Յովհաննէս Երզնկացիի սիրային երգերը արեւելեան ցնարգուշը կը կրեն : Սիրուած կնոջ վրայ գովեստները կը հիստուին գլխաւորապէս կնոջ ֆիզիքական ձիրքերը ի նկատի առնելով, բաղաւորութիւններ ընելով ծաղիկներու, աստ-

ղերու, և բնութեան ներկայացուցած ամենէն հրապուրիչ գեղեցկութեանց հետ ։  
 Փ . Ատան կը դիտէ որ պաշտամունքի փափաքը աւելի բնութեան կ'ուզողոյի քան բարեկամունքինն : Ես բողոքողին հակառակը կը խորհիմ . այն եռանդը որով բռնկած են այդ սողերը՝ շատ ուժգին է մեծահոշակ գաղղիացի գրողին հետ համաձայնիլ կարենալու համար : Ինձ կը թուի որ բանաստեղծը կը միացնէ արարչագործութեան ամբողջ գեղեցկութիւնները՝ բաղդատութեան հետեցնելու համար սիրուած կնոջ գերազանցութիւնն և ակնկալութեան անձկութիւնը :

Նահապետ Քուչակ՝ որ ՉՊ դարու սկիզբը ծաղկեցաւ, գիտէ այնուհանդերձ մտցնել նոյն իսկ սիրային բանաստեղծութեան մէջ նուրբ ու փափուկ սրամտութիւն մը :

« Եթէ կ'ուզես կեանքս, կ'երգէ ան, ո՛վ հոգեակս, չիմ կարող մերժել, պիտի տամ գայն . բայց կը վախնամ թէ աչքերս ուղես . Ինչպէս կրնամ ապրիլ առանց քեզ տեսնելու » :

Իւ ուրիշ տեղ մը .  
 « Այն օրը՝ յորում դուն աշխարհ եկար, դուն կու լայիր և ամէնքը ուրախ էին : Այնպէս մաքուր եղիւր կեանքը ձգելու ատեն որ կարենաս ժպտիլ մինչդեռ ամէնքը պիտի լան » :

Այս բանաստեղծը՝ որ կարողացած է կարճ քնարերգութիւններու մէջ յաւերժացնել հոգւոյ վիճակ մը, թովանդակել պզտիկ բանաստեղծութեան մը մէջ բարոյագրութեան ամբողջ վարդապետութիւն մը, ամենէն հիանալիին է միւս հայ բանաստեղծներուն մէջ իր կարուկութեանը, պարզութեանը և ներդաշնակութեանը համար : Հեղինակն է նաև առածային և այլաբանակնակ երգերու՝ որոնցմէ կը բղխին կեանքի խիստ կանոններ :

« Դիտէ այն կանթեղը՝ որ ջուր, իւղ և կրակ կը պարունակէ . կանթեղը մտքի նման է, ջուրը՝ կրթութեան, իւղը՝ գիտութեան » :

Ստուգիւ յուզիչ են իր « պանդուխտի երգեր »-ը՝ որոնց մէջ այնչափ խոր և կեն-

դանի կերպով կը թրթոյալ կարօտախտի զգացումը, և այնչափ գողտրիկ և անմեղուկ է ամուսնականը :

« Հարուստ մարդու մը աղքատ դառնալէն տխուր բան չկայ աշխարհի վրայ . կը գաղթէ օտար երկիր, կ'ապրի առանց հօր, առանց մօր և եղբօր . երբ կը տեսնէ ուրիշներ՝ որ զիրար կը սիրեն, դէմքը կը ծածկէ և կը հեռանայ, Երբ կանաչ ծառ կը չորնայ, Ինչ կարելի է բոսլ անոր՝ մխիթարելու համար » :

Եւ թարգմանելով արտմութիւնն այն հարսին որ ամուսնոյն մեկնիր կը տեսնէ .

« Կը մեկնիմ, կը մեկնիմ, կ'ըսէր իմ պզտիկ ամուսինս . չէի հաւատար . երբ մնաս բարով բաւ » ես ոչնչացած էի . զինքը յափշտակուած դիտեցի, երբ ոտքը ասպանդակին վրայ դրաւ . այն ամէն տեղերէն որոնցմէ պիտի անցնիս թող ճամբաները յաշող ըլլան քեզի համար . շաւիղներուն վրայ՝ զորս պիտի կոխես՝ թող վարդերն և մրտենիք բողբոջին քու ոտքերուդ ներքեւ » :

Փափուկ վայելչութեամբ լեցուն է խօսակցութիւն մը վարդին և սոխակին միջեւ, որուն մէջ վերջինը կը յարձակի և միւսը ճարպիկօրէն ինքզինք կը պաշտպանէ . զայս կը պարտինք Առաքել Բաղդեշեցիին որ ծնած է ժ.Գ դարու վերջին տարիներուն մէջ, ի մէջ այլոց՝ հեղինակ « Յովասափու պատմութիւնը » և « Պատմութիւն եօթն իւ մասանոց » գրքերուն :

Այս հատորին մէջ կը կարդանք Սարկաւազ Բերդակցիի « Խաղողին գովեստը », ուրիշ « Պանդուխտի երգեր » և մտածուածներ « Աշխարհի ունայնութեանց » վրայ Մկրտիչ Նաղաշի, վերոյիշեալ Ճիւղանիին՝ « Նախանձոտը », « Ուրացողը », « Կարմիր տարին » և « Ինչպէս պիտի լայի » : Այս քնարերգութիւնները ըլլալով ժամանակակիցի մը, ծնած ի Քարծակ 1846ին, մեծաւ մասամբ արեւմտեան ճաշակով գրուած են :

Զօպանեան այս նոր հրատարակութեամբ պատկած է հայ բանաստեղծութեան շէնքը, մատուցանելով նշանաւոր ծառայութիւն

մը իր հայրենիքին և ամէն երկրի ուսու-  
 մաստէններուն, Քայց, ինքն ալ բանա-  
 ստեղծ, արժանի է այդպէս ճանչցուելու :  
 « Poèmes arméniens et modernes »  
 հաւաքածոյին մէջ, ան մտոցած է իր  
 բանաստեղծութիւններէն երկու հատ, մէկը  
 հայրենիքի սիրովը թրթուուն՝ ձօնուած Հա-  
 յաստանի, միւսը վերնագրուած « Հիւան-  
 դանոց » : Այս վերջոյին մէջ այդ սխուր  
 օթեւանի մեռելական նկարագրութենէն  
 վերջ այսպէս կ'երգէ .

« Ora talvolta, una donna traversa l'ospedale,  
 più bella della bellezza, grande come una dea,  
 con gli occhi fulgenti di consolazione e le ochie-  
 me vivide di speranza. una donna strana e dolce,  
 recinta di bianchi veli. Essa sfiora i letti nel  
 suo lieve passaggio, sosta al capezzale degl'in-  
 fermi e versa sui loro dolori la pace de' suoi  
 puri veli e la dolcezza di oiel sereno de' suoi  
 occhi. Sponde il suo sorriso sulle ferite aperte,  
 carezza co' suoi capelli le fronti ardenti, il suo  
 respiro rinfresca e imbalsama l'aria; e, china sui  
 rantoli, canta una ninna-nanna.

« La sua larga ninna-nanna sembra dire che  
 la Sventura è l'inizio e la fine di tutto, e gli  
 esseri, fratelli nell'universale infortunio, devono  
 amarsi e sostenersi scambievolmente e, per di-  
 menticare il dolore di vivere, devono inebbriarsi  
 d'un sogno più grande della vita.

« Tutto in lei contraddice l'aspra legge della  
 Casa; sembra ch'essa arrivi da un mondo molto  
 lontano e molto diverso; e forse essa è il Rimor-  
 so del Destino che percorre, desolato, questa or-  
 rida e assurda Casa ch'ei si pente d'aver costrut-  
 ta. Essa è la Visitatrice inafferrabile e miste-  
 riosa, l'infermeria angelica e materna; il cui  
 passaggio talvolta, getta qualche raggio nelle  
 tenebre dolorose del Grande ospedale; e nella  
 loro lingua povera i Dannati l'hanno chiamata:  
 Pietà ».

Քայց կրթութեան և զարգացման ե-  
 ոանդը՝ որ արդ կ'երևայ Հայաստանի մէջ,  
 Հայք կը պարտին մեծ մասամբ հայ եկե-  
 ղեցւոյ զլուսին Մկրտիչ Խրիմեանի, ե-  
 ոանդուն առաքեալ, հայրենասէր և քաջ  
 զորդ, և Վենետկոյ միխիթարեան հայրե-  
 ռում՝ որոնք հրատարակեցին հայ դասա-  
 կան մատենագրութեան անտիպ գրուածոց  
 մեծ մասը, թարգմանեցին արեւմուտքի  
 զրական զլուսն գործոցները և վերջապէս  
 ի լոյս բերին արդի հայ զրականութիւնը :  
 Ինչպէս որ միջնադարեան վանքերուն  
 մէջ պահուեցաւ հին գիտութիւնը և փո-  
 խանցուեցաւ ապագայ սերունդին, մինչդեռ

կը զոտար վայրենիներու հրոսը՝ որ պիտի  
 կործանէր ամէն ինչ, այն վանքէն որ կը  
 կանգնի Վենետկի Հայոց կղզոյն մէջ, կը  
 ճառագայթէ նոր քաղաքակրթութեան լոյսը  
 հայ ժողովրդեան վրայ » : (ՖԱԿԵՐՅՈՅ)

Յաջորդ ամսուն կը ներկայացնենք Mer-  
 cure musicalի դասաստանը հայ երա-  
 ժըշտութեան վրայ՝ Տիկ. Բարսեղեանի ի  
 փարիզ տուած նուագահանդէսին առթիւ :

† Z. ԱՐԱՆԱԳԻՆԷՍ Վ. ՂԱՓՏԱՆԵԱՆ

Քմարիկ մ'այն շիրմարքիմ վրայ՝ որում մեր-  
 քի կը համզիք : Մի՛ն էր այն ամծերեմ՝ որ « Բազ-  
 մավէպ » ի մահիկով էջիրը զարգարեցն՝ իրեց  
 մտքի մամուշակներով անոր զարուսմ հիւսելով .  
 յոմած էր Տրպպղոն 1836 փետր. 14իմ . քա-  
 համայ ձննադրուած 1869 ապրիլ 24իմ՝ Ս . Ղա-  
 զարու մէջ :

Գրական ասպարէզը մտաւ զրաքար ոտամա-  
 տրներով՝ որոնցմով ընտիր լեզու մը՝ քիճուար  
 միտք մը ցոյց տուաւ : Գ'երգէր իր հանձնքիմ հա-



մար, ոչ համբաւի . իր ոտամատրները « Բազ-  
 մավէպ » ի մէջ հրատարակուած գրեթէ ամառում  
 ( Ջ . Ղ . ստորագրութեամբ ) և ամմկատ ամ-  
 ցած՝ կը թուի մ հնուրեմ անցնող մեղեդիներ, ո-  
 ռոնց մուգազը ամեամթ կը մնայ :

Տեսուչ ընտրուեցաւ Միխիթարեան Տպարամի .  
 1879իմ կեննեցաւ դէպ ի իր հայրենիքը ուր մնաց  
 զրեթէ երեսու տարի - մինչև իր մահը - իբրև  
 դասատու և Տեսուչ օգնական՝ Միխիթարեան Վար-  
 ժարամիմ մէջ :

Եզակամ երևոյթի մ'էր իր անպակոյց ու մե-  
 ռասէր կենցաղով . ընտանեկան զորովով, հյու-  
 թեամբ և աշխատանքով . Այս յատկութիւններմ  
 էիմ իր ընկերները . անոնք տարրեցան իր էու-  
 թեան հետ . կարելի է վկայ կամչել անոնց՝ վեր-  
 չիմ արեւմ իր կենսքիմ՝ մարած Յ յուլիս 1907 .  
 Մեկմած է՝ անգարծ կերպով դէպ ի իր մշտա-  
 կամ հայրենիքը . Աճուշտ երկնքիմ մէջ պսակ  
 մը կը տարուի իր գլխում . այդ պակակն շուք  
 թող ընկնայ, մնալով անեղծ, իր շիրմարքիմ  
 վրայ : ՊՄԲ .